

են երեւանում – ազատ միջավայր, այսինքն խօսքի ազատութիւն, եւ հանդուրժող ոգի իշխանաւորների մէջ:

Եթէ «Կրօնորդը»-ը Մոսկւայում, կամ «Նեանդիդ»-ն Թիֆլիսում որոշ յաջողութիւն ունեն, գլխաւոր պատճառը այն է, որ ռուս ու վրացի բոլշեւիկները մտքով անելի բարձր են ու անելի լայնսիրտ, քան երեւանցիները:

ՍԱՍՈՒՆՅԻ ԴԱԻԻԹ

Հայպետերատը ձեռնարկել է «Մասունցի Դաւիթ» երկհատոր մեծ ժողովածուի հրատարակութեան: Ժողովածուի մէջ մտնելու է ժողովրդական վէպի մօտ 60 տարբերակ (վարիանտ): Առաջին հատորը բաղկանալու է մօտ 1000 էջից եւ ընդգրկելու է 40 տարբերակ, որոնցից շատերը գրի են առնւած վերջին տարիները եւ լոյս են տեսնելու առաջին անգամ: Բոլոր տարբերակներին կցւած են յառաջաբաններ եւ ծանօթութիւններ: Ժողովածուն խմբագրել եւ տպագրութեան պատրաստել է պրոֆ. Ման. Արեղեանը: Արտաքին ձեւաւորումն ու պատկերազարդումը կատարել է նկարիչ Յակ. Կոջոյեանը:

«ՎԱՀԱՆ ՏԵՐԵԱՆ» ԺՈՂՈՎԱԾՈՒ

Յունաբնի լրանում է վառ. Տերեանի ծննդեան յիսնամեակը եւ մահւան 15 ամեակը: Այդ առիւ երեւանում պատրաստում է մի ժողովածու, որ նոր նիւթեր է բովանդակելու բանաստեղծի կեանքի եւ ստեղծագործութեան մասին: Ի միջի այլոց, պատրաստւած են «Էջեր Վ. Տերեանի յեղափոխական գործունեութիւնից»՝ Մոսկւայի դիւանական վաւերագրերի հիման վրա: Ժողովածուի մէջ մտնելու են Ն. Մառի մէկ յօդածը՝ «Իմ ուսանող վառն Տերեանի մասին», պրոֆ. Ի. Օրբելու յիշողութիւնները, Վ. Վահանեանի գրի առած տեղեկութիւնները Վ. Տերեանի գործունեութեան մասին հոկտեմբերեան յեղա-

շրջման օրերին Պետրոգրատում եւ Մոսկւայում, Ա. Շահիջանեան – Տերեանի գրութիւնը՝ «Տերեանի վերջին ուղեւորութիւնը», Բանաստեղծի աւագ եղբայր Զաւակեցու յուշերը եւայլն: Բովանդակութիւնից դատելով՝ ժողովածուն պէտք է լինի հետաքրքրական, նոր տեսլանքով հարուստ վաղամեռ բանաստեղծի կեանքի եւ ստեղծագործութեան լուսաբանութեան համար:

ՄԵԼԻՔՆԵԱՆ ՖՈՆԴ

Մելիքեան ֆոնդի 1935 թ. հրատարակութիւնների համար նախատեսւած է 125,000 ռուբլի: Արդէն տպագրութեան է յանձնւած 10 հատոր գիրք, որոնց թւում՝ Յակոբեանի «Ուղեգրութեան» 2րդ հատորը, Ե. Շահադեղի «Եւաչ. Արովանի Դիւանը», Յ. Մանանդեանի «Հայաստանի հին մարտարապետները», Ն. Սամէլեանի «Հին Հայաստանի Կուլտուրան», 3-րդ հատոր, պրոֆ. Զավախիչ-Վիլու «Նիւթեր Հայաստանի Սոցիալական Պատմութեան վերաբերելով», պրոֆ. Յ. Օրբելու «Հայաստանի Արեւստի պատմութիւնը», Դ. Սիմոնեանի «Միֆ. Նալբանդեան» եւայլն: Տպագրւած պատրաստ են եւ շուտով լոյս կը տեսնեն պրոֆ. Մելիքեանի Բէկի «Վրաց ազգիւրները հայերի եւ Հայաստանի մասին», Դ. Լեւոնեանի «Հայաստանի Պարբերական մամուլն սկզբից մինչեւ այժմ», հանգուցեալ Սոյ. Մելիքեանի «Հայաստանի երաժշտութեան պատմութիւնը», Ալի. Քալանթարի «Վաղարշապատի պեղումները», Հր. Աճառեանի «Արմատական Բառարանի յաւելածը» եւայլն:

ՄԱՆԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

Բուրժուէշում կազմւած է հրատարակչական անանուն մի ընկերութիւն – «Մասիս» – 500,000 լէյ դրամազլովով: Ընկերութեան նպատակն է հրատարակել հայերէն լեզուով գրքեր կամ օտար լեզուներով հայերի մասին աշխատու-

քիւններ: Ընկերութեան կանոնագրի 7րդ յօդւածը տրամադրում է. «Հրատարակել հայ տոոց եւ պատանինքու համար հայերէն դասագրքեր, գրական գործեր եւ հանդէսներ. տարածել հայ հասարակութեան խաւերում մէջ արեւմտեան մշակոյթը, ինչպէս նաեւ ծանօթացնել օտարներում հայ մշակոյթը: Հաստատել յատուկ մրցանակ՝ ընկերութեան շահին մէկ մատուլը, քաջակերելու համար արժէքաւոր գրական գործերը»:

Ընկերութիւնը առաջին հերթին ձեռնարկել է մանկական գրականութեան հրատարակութեան՝ հիմք դնելով «Մասիս» մանկական մատենաշարին, որից տարեկան պէտք է լոյս տեսնէ 24 գրք: Բոլորի՝ իւրաքանչիւրը 32 էջից բաղկացած: Արդէն լոյս են տեսել երեք գրքեր: Հրատարակութիւնը արտաքինում գեղեցիկ է - ընտիր քուրճ, մաքուր տիպ, խոշոր տառեր, պատկերազարդ. կողքի վրա Մեծ ու Փոքր Մասիսների եւ Արաքսի նկարը: Գինը շատ

մատչելի: Մատենաշարը պէտք է իր մէջ ամփոփէ հայ եւ օտար մանկական գրականութեան լաւագոյն մասը: 24 գրքոյկի տարեկան բաժնեգինն է 2 դուլար կամ 30 ֆր. ֆրանկ: Բաժանորդագրել կարելի է եւ «Վեմ»-ի միջոցով:

«ՍԵՒԱՆ» ՀՐԱՏ. ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Բոստոնում կազմւած է «Սեւան» անունով հրատարակչական մի ընկերութիւն, որ հրատարակելու է ժողովրդական - հանրամատչելի գրքեր հայ եւ օտար լեզուներով: Արդէն տպագրութեան է յանձնւած մօտ մի տարի առաջ Հայաստանից դուրս եկած եւ վերջերս «Հայրենիք»-ում մի շարք հետաքրքրական յօդւածներ ստորագրող Էջմիածնեցիի «Տասն եւ հինգ տարի պոլշեիկ երկիրներում մէջ» աշխատութիւնը: «Սեւան»-ը պիտի հրատարակէ նաեւ Համաստեղի երկերի անգլիերէն թարգմանութիւնը:

